ՀԱՅ ԿԵԱՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

ԵՐԵՔ ՊԵՏՈՒԹԵԱՆՑ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԱՌԹԻՒ

(ՊԵՏ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ)

(Պաշտօնական)

ՊԵՏՐՈԳՐԱԴ, 12 *Մայիսի.*— „*Հայաստանում տեղի է ունենում հայերի կոտորած վերջին ամբողջ ամսուայ ընթացքում, քրդերի և տաճիկների ձեռքով, օսմանեան իշխանութիւնների պարզ անփութութեան պատճառով, և երբեմն էլ նրանց անմիջական աջակցութեամբ։ Ապրիլի կիսին (նոր տումարով) տեղի է ունեցել հայերի կոտորած Էրզրումում, Բերգանում, Էգինում, Բիթլիսում, Մուշում, Սասունում, Զէյթունում և ամբողջ Կիլիկիայում։ Վանի շրջակայքում գլխովին կոտորուած են հարիւրաւոր գիւղերի բնակիչներ։ Վանում քիւրդերը պաշարել են հայկական մասը։ Միևնոյն ժամանակ Պօլսում թիւրք կառավարութիւնը ձերբակալում և անլուր ճնշումների է ենթարկում խաղաղ հայ բնակչութիւնը։ Նկատի առնելով այս նոր ոճիրները, որ գործում է Թիւրքիան մարդ-*

կութեան և քաղաքակրթութեան դէմ, Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի դաշնակից կառավարութիւնները հրապարակով յայտարարում են Գրանը, որ իրենք այս բոլոր սճիրների համար անձնական պատասխանատուութիւն են դնում թիւրք կառավարութեան բոլոր անդամների, նոյնպէս օսմանեան իշխանութիւնների այն տեղական ներկայացուցիչների վրայ, որոնք մասնակից եղած կլլինին այդպիսի կոտորածների“:

«Արարատ»-ի ընթերցողներն արդէն գիտեն՝ որ Հայաստանում տեղի ունեցած դժբախտ հայերի կոտորածների լուրն առնելուն պէս՝ Ազգիս վշտացեալ Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե. Վեհափառ Կաթուղիկոսն իւր պատմական հեռագիրներով*) դիմեց Ռուսաստանի, Ֆրանսիայի, Անգլիայի, Իտալիայի և Միացեալ Նահանգների կառավարութեանց և սրանց ուշադրութիւնը դարձնելով Հայաստանում քրդերի ու տաճիկների ձեռքով տեղի ունեցած հայկական կոտորածների վրայ, խնդրեց այդ պետութիւնների մարդասէր պաշտպանութիւնն ու հովանաւորութիւնը՝ փրկելու բազմաչարչար տաճկահայ ժողովուրդը և զսպելու խորտակող տաճիկ կառավարութեան գազանային հակումները։

Մի քանի օրից յետոյ Վեհափառն ստացաւ այդ կառավարութիւններից յուսադրական պատասխաններ։ Վեհափառի դիմումները երեք դաշնակից պետութեանց համար խորհրդածութեան նիւթ դառնալով՝ հանդէս եկաւ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի կառավարութեանց կողմից վերև առաջ բերած 12-ն Մայիսի պատմական հեռագիրը։ Դաշնակից պետութիւնները այդ հեռագրով ամբողջ աշխարհի առաջ հաստատում են Հայաստանում տեղի

*) Տես «Արարատ»ի ներկայ տարուայ Փետրվ.—Մարտ համարները, էջ 170—177։

ունեցող դժբախտ հայ ժողովրդի կոտորածների փաստը, Պոլսի և այլ տեղերի խաղաղ հայ ազգաբնակութեան դէմ գործած խժդժութիւններն ու ճնշումները, և ապա սպառնալով, հրապարակով պատասխանատուութեան են կոչում կատարուած ոճիրների համար Թիւրք կառավարութեան բոլոր անդամներին և տեղական ներկայացուցիչներին, որոնք մասնակից են եղել հայկական կոտորածներին։

Դէթ այս անգամ յուսանք, որ երէ ճզor դաշնակից պետութեանց այս ազդու դիմումը կը սթափեցնի արկածախնդիր Տաճիկ կառավարութեան, յանցաւորները կը-տանան իրենց պատիժը, իսկ անմեղ հայ ժողովրդի թափած արիւնն էլ կըլինի վերջինը։ Անշուշտ պէտք է իրականանայ Անգլիայի կառավարութեան կողմից նախարարապետ Ասկվիտի հոկտեմբերի 28-ին Հիլդ-Հոլլում Տաճկաստանի համար արտասանած հետևեալ ճակատագրական խօսքերը. «Անգլիան սուրը պատեանի մէջ չի դնիլ, մինչեւ որ չճնշուին թաղման զանգերը Տաճկաստանի տիրապետութեան՝ ոչ միայն Եւրոպայում, այլ նոյն իսկ Տաճկաստանի Ասիական երկրների մէջ, որովհետեւ Տաճկական կառավարութիւնն ինքնասպանութիւն է գործել եւ սեպհական ձեռքերով փորել իւր գերեզմանը»։ Այո, պէտք է վերջապէս Հայաստանում հնչուեն Տաճկաստանի տիրապետութեան թաղման զանգերը, որպէսզի միաժամանակ բազմաչարչար հայ ժողովրդի յուսալից խաղաղ կեանքի յարութեան զանգերը զօղանջեն և ուրախութեան «Մեծ Աւետիս»-ը տարածեն ամենուրեք։

ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՁԱՅՆԸ.

Ազգիս Վեհափառ Կաթուղիկոսը մայիսի 13-ին Մանազկերտից (Բերդ) ստացել է տեղական առաջնորդական փոխանորդ Յովհաննէս քահանայ Տ. Աւետիսեանից 1915 թ. 7 մայիսի թուակիր գրութիւնը, որով նկարագրում է Մա-